## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԾՁԲ-25/59 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԾՁԲ-25/59 ծածկագրով պայմանագրում 2025 թվականի դեկտեմբերի 04-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և «Աննա Սահակյան» ԱՁ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 04-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

- Հաստատվել է Պայմանագրի Հավելված N 2-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը համաձայն՝ Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2025 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԾՁԲ-25/59 ծածկագրով պայմանագիրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ծառայության ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության ձեռքբերման համար «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Երևանի ավտոբուս» ՓԲԸ**